# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ք.Երևան 12.11.2022թ.

Բողոքարկման հանձնաժողովը,
(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)
հետևյալ կազմով.
նախագահությամբ՝ իրավ. գիտ. թեկնածու Կարեն Հակոբյանի
մասնակցությամբ անդամներ՝ դատավոր Դանիել Դանիելյանի
դատավոր Աննա Դիլբարյանի,

քննարկելով վարչական մասնագիտացման դատավորների թեկնածուների ցուցակի համալրման նպատակով անցկացվող որակավորման գրավոր քննության արդյունքների դեմ հավակնորդի կողմից բերված բողոքը,

## Պ Ա Ր Զ Ե Ց

Հավակնորդը բողոքարկել է վարչական դատավարություն բաժնի 9-րդ և 14-րդ առաջադրանքները:

Հավակնորդի բողոքի հիմքերի և հիմնավորումների շրջանակում քննարկելով բողոքը՝ Հանձնաժողովը արձանագրում է հետևյալը.

**1. Վարչական դատավարություն բաժնի 9-րդ առաջադրանքի** ճիշտ պատասխան կարող է համարվել ինչպես 4-րդ տարբերակը, այնպես էլ հավակնորդի կողմից նշված՝ 3-րդ տարբերակը, քանի որ առաջադրանքը երկիմաստության ու տարընթերցումների տեղիք է տալիս:

Այսպես՝ առաջադրանքը պահանջում է մատնանշել վարչական դատարանի իրավաչափ վարքագիծն այն դեպքում, երբ վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի քննության ընթացքում պարզվում է, որ վիճարկման հայցը ներկայացվել է սահմանված երկամսյա ժամկետի խախտմամբ: Քննարկվող իրավիճակում իրավաչափ կարող է համարվել վարչական դատարանի հետևյալ վարքագիծը.

1) նախ՝ վարչական դատարանը հնարավորություն է տալիս հայցվորին ներկայացնելու բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդություն,

2) քննարկելով այդ միջնորդությունը՝ վարչական դատարանը կարող է կամ մերժել կամ բավարարել այն,

3) եթե վարչական դատարանը մերժում է բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին հայցվորի միջնորդությունը, ապա կարճում է վարչական գործի վարույթը միջնորդությունը մերժելու մասին միջանկյալ դատական ակտի ուժի մեջ մտնելուց հետո:

Փաստորեն, վարչական դատարանը կարճում է վարչական գործի վարույթն այն դեպքում, եթե բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին հայցվորի միջնորդությունը մերժելու մասին որոշումը մտել է ուժի մեջ: Քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 131-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բաց թողնված դատավարական ժամկետի վերականգնումը մերժելու մասին որոշումը վերաքննության կարգով բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտ է, ապա այդ որոշումն, ըստ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 11-րդ մասի, ուժի մեջ է մտնում միջնորդություն

ներկայացրած անձի կողմից ստանալուց 5 օր հետո: Նույն ժամկետն է սահմանված նաև այդ դատական ակտը բողոքարկելու համար (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 2-րդ մաս):

Վերոգրյալից հետևում է, որ առաջադրանքի 4-րդ տարբերակը կարող է դիտարկվել որպես ճիշտ պատասխան, քանի որ այդ տարբերակում արտացոլված է այն գաղափարը, որ բաց թողնված դատավարական ժամկետի վերականգնումը մերժելու դեպքում դատարանը չպետք է շտապի կարճել գործի վարույթը և պետք է հնարավորություն տա հայցվորին՝ իրացնելու իր բողոքարկման իրավունքն այդ դատական ակտի դեմ:

Միևնույն ժամանակ, առաջադրանքի 3-րդ տարբերակը ևս կարող է դիտարկվել որպես ճիշտ պատասխան, քանի որ այդ տարբերակում արտացոլված է այն գաղափարը, որ բաց թողնված դատավարական ժամկետի վերականգնումը մերժելը վերջիվերջո հանգեցնում է գործի վարույթի կարճման: Ընդ որում, առաջադրանքի 3-րդ տարբերակի ձևակերպումից հստակ չի երևում, թե վարչական դատարանը ե՞րբ է կարճում գործի վարույթը՝ բաց թողնված դատավարական ժամկետի վերականգնումը մերժելու մասին որոշումն ուժի մեջ մտնելուց հետո, թե՝ դրանից առաջ: Հետևաբար, առաջադրանքի 3-րդ տարբերակի ձևակերպումը, այն է՝ *«հնարավորություն է տալիս հայցվոր կողմին ներկայացնել բաց թողնված ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդություն. եթե ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի չի համարում, մերժում է ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը և գործի վարույթը կարճում»*, ևս կարող է համարվել վարչական դատարանի իրավաչափ վարքագիծ:

Հանձնաժողովը գտնում է, որ առաջադրանքի 3-րդ տարբերակը պետք է դիտել, որպես ճիշտ պատասխան և այս առաջադրանքի համար Գնահատման հանձնաժողովի կողմից նշանակված 0 միավորը դարձնել 1 միավոր:

**2. Վարչական դատավարություն բաժնի 14-րդ առաջադրանքի** ճիշտ պատասխանը 1-ին տարբերակն է, քանի որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի 3-րդ մասը հստակ սահմանում է, որ օրերով հաշվարկվող ժամկետներում չեն ներառվում այն ոչ աշխատանքային օրերը, որոնք նախատեսված են միայն օրենքով: Հետևաբար, հավակնորդի կողմից նշված տարբերակը չի կարող համարվել առաջադրանքի ճիշտ պատասխան:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Բողոքարկման հանձնաժողովը

**Ո Ր Ո Շ Ե Ց**

1. Թիվ 4053 ծածկագրով աշխատանքի քննության արդյունքների դեմ բերված բողոքը բավարարել մասնակի՝ Վարչական դատավարություն բաժնի 9-րդ առաջադրանքի համար հավակնորդի պատասխանը գնահատել 1 միավոր:
2. Մնացած մասով բողոքը մերժել:

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝** Կ. ՀԱԿՈԲՅԱՆ

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝** Դ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Ա. ԴԻԼԲԱՐՅԱՆ